ՄԿՐՏԻՉ ԱԲԵԳՈՍ. ՏԻԳՐԱՆԵԱՆ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ, (Հրաշագործ)— Ծ. 1815ին. Զո. 1838ին, Մշոյ Ս. Կարապետի վանքին մէջ. 1867ին կը ձեռնադրուի եպս. նոյն տարին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը (Սիօն, 1867). վարած է քննական և առաջ. պաշտօններ և բազմաթիւ ճամբորդութիւններ կատարած է Պոլիս, Հայաստան, Կիլիկիա և Բիւրտիստան, Մոլտովալաքիա, Պուքովինա, Յունաստան, և այլն. իր լիակատար կենսագրութիւնը տեսնել իր յօրինած Հայելի գործոց Տիգրանեան վրդի խորագրով գիրքին (տպ. 1864). ինչպէս նաև Զէյթինի գործերը, Բիւրտիսպանի եւ Մուշի վանորէից վարժարանների վիճակը անունով տետրակին մէջ (տպ. Պոլիս, 1869)։ 1845ին բանտին մէջ քրտերէնի թարգմանած է Աւետարանը և նոյն տարին ալ տպագրած է. 1858ին յօրինած է Բրտերին Բերական մը և 1863ին Լայտեր Լուսատու գիրքին Ա. հատորը, բարեսէր անձերու նպաստներովը։ Կը վախճանի Տիգրանակերտի մէջ։ 1872ին մագաղաթեայ Աւետարան մը նուիրած է Ս. Յակոբի ինչպէս յիշած ենք (տե՛ս էջ 280)։

ՄԿՐՏԻՉ. ԿԹՂ. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ, ՎԱՆՑԻ.— Ծ. 1820ին. հօրմէն կ'առնէ իր նախնական ուսումը։ Իր կնոջ մահէն յետոյ Զո. վրդ. 1854ին. Աղթամարի մէջ. եպս. կը ձեռնադրուի 1868. ՊԿ. (1869 — 1873)՝ պատուիրակ Պերլինի Վեհաժողովին 1878ին. 1891 Յունուարին կը տարագրուի Ս. Երուսաղէմ. եւ կը մնայ մինչեւ 1893. ԿԹՂ. ամենայն հայոց (1893 — 1907)։ Խրիմեան Հայրիկ իր տարագրութենէն առաջ ալ 1850ին, ուխտաւորութեամբ այցելած էր Ս. Յակոբի վանքը, ուր Յովհաննէս պտրքի. քաջալերութեամբ յօրինած է Հրաւիրակ Երկրին Աւետեաց քերթուածը. որ Կ. Պոլիս կը տպագրուի 1851ին Պալեան Կարապետ Ամիրային ծախքովը. երկրորդ անգամ դարձեալ ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և քիչ ժամանակ կը մնայ ու կը մեկնի Պոլիս։ Բառորդ դար վերջ 1891ին, ինչպէս վերև յիշեցինք, կը տարագրուի Կ. Պոլսէն Ս. Յակոբ. ուր նոր սրբագրութիւններով 1892ին Հրաւիրակը կրկին կը հրատարակէ Ս. Յակոբի վանքին տպարանէն Կիւլպէնկեանց հրաշատներու ծախքովը. և սկիզբը կը դնէ հետեւեալ յիշատակարանը. «Ի յիշատակ հանգուցեալ սիրեցելոյն հօրն Սերովբէի Կիւլպէնկեան կանգնեն զՀրաւիրակս իբրև անմահ մահարձան